ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ (ԱՊՄ) ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՆԵՐ- ԿԱՄ ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ

	Դիմակ սովորական	**N95 (ռեսպիրատոր տեսակի)**[1,2]	**Աչքերի/դեմքի պաշտպանություն**	**Ձեռնոցներ և հատուկ կոմբինեզոն**
COVID19-ի բացասական արդյունքներով (ՊՇՌ-ով կամ արագ թեստով) պացիենտ	Կրել դիմակ		Կրել պաշտպանիչ ակնոցներ	Կրել կոմբինեզոն և ձեռնոցներ
Հաստատված COVID19-ով կամ վերջինիս թեստի պատասխանը սպասող կամ առանց ախտանշանների կամ անհայտ ռիսկով պացիենտ				
Աերոզոլացման բարձր կամ հավանական բարձր վտանգով միջամտություններ. • բրոնխոսկոպիա • աերոզոլային թերապիա • ինտուբացիա/էքստուբացիա • ոչ ինվազիվ շնչառական օգնություն • շնչուղիների բաց արտածծում • ՔԿԱ կամ ստամոքս-աղիքային ուղու էնդոսկոպիա • Քիթ-ստամոքսային խողովակի տեղադրում • տրանսէզոֆագեալ էխոսրտագրություն • բարձր հոսքով թթվածնային թերապիա • ՔԿԱ վիրահատություններ • դիմածնոտային վիրահատություններ • գանգի հիմի վիրահատություններ • այլ շնչափողային կամ կրծքային վիրաբուժություն		Միջամտության սենյակում գտնվող թիմի բոլոր անդամները պետք է կրեն N95 ռեսպիրատոր	Կրել պաշտպանիչ ակնոցներ	Կրել կոմբինեզոն և ձեռնոցներ

Աերոզոլացման նվազագույն վտանգով միջամտություններ • բաց վիրահատություններ • մակերեսային վիրահատություններ • լապարոսկոպիկ վիրահատություններ • ոչ էնդոսկոպիկ վիրաբուժություն • հարկավոր է քննարկել պնևմոպերիտոնեումի օդի անցկացումը ֆիլտրով • քննարկել ծխի/գոլորշու հեռացումը համապատասխան կոագուլյատորների կիրառմամբ	Միջին բուժանձնակազմը և վիրաբույժները կրում են դիմակ և հեռանում են սենյակից ինտուբացիայի և էքստուբացիայի ժամանակ	Անզգայացման թիմը կրում է N95	Կրել պաշտպանիչ ակնոցներ	Կրել կոմբինեզոն և ձեռնոցներ

Հարկավոր է հնարավորինս խնայել ԱՊՄ-ը: COVID19 դրական կամ թեստի պատասխանները սպասող պացիենտների կամ N95 դիմակ պահանջող որևէ այլ պացիենտների վիրահատարաններում հարկավոր է նվազագույնի հասցնել անձնակազմի քանակը

Հետևեք ԱՊՄ երկարաժամկետ օգտագործման գործելակարգերին [1]

Կտորեղենից դիմակները չեն դիտարկվում իբրև ԱՊՄ

1. Երկարատև օգտագործման գործելակարգ սովորական դիմակների և N95 համար՝ մեկ դիմակ հերթափոխի համար: Փոխել դիմակը, երբ վերջինս աղտոտվում է շնչական արտադրություններով կամ ակնհայտ աղտոտված է կամ վնասված: Դիմակը մշտապես պետք է ծածկի միաժամանակ քիթը և բերանը:
2. Անհատական օդ մաքրող ռեսպիրատորները (PAPR) ցուցված միայն այն դեպքերում, երբ N95 դիմակները չեն համապատասխանում կամ հարմարվում բուժաշխատողի դեմքի կառուցվածքին:
3. Դեմքի/աչքերի պաշտպանություն՝ ցանկալի է օգտագործել բազմակի օգտագործման ակնոցներ կամ դիմային վահաններ, որոնք պետք է ախտահանվեն յուրաքանչյուր կրելուց հետո: